

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից, ներառյալ Հայաստանի Հանրապետության տարածքը, Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք, ներառյալ Հայաստանի Հանրապետության տարածքը, Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք չհանդիսացող տարածքով ապրանքների և տրանսպորտային միջոցների փոխադրման առանձնահատկությունները

1. Սույն Արձանագրությունը սահմանում է Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից, ներառյալ Հայաստանի Հանրապետության տարածքը, Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք, ներառյալ Հայաստանի Հանրապետության տարածքը (այսուհետ՝ Միության մաքսային տարածք), Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք չհանդիսացող տարածքով (այսուհետ՝ օտարերկրյա պետությունների տարածք) ապրանքների և տրանսպորտային միջոցների փոխադրման առանձնահատկությունները:

2. Սույն Արձանագրությունը չի կիրառվում խողովակաշարային տրանսպորտով, էլեկտրահաղորդման գծերով, ջրային կամ օդային ուղիներով փոխադրվող ապրանքների նկատմամբ:

3. Սույն Արձանագրության մեջ կիրառվում են «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագրի (այսուհետ՝ Մաքսային միության մաքսային օրենսգրք) անբաժանելի մաս կազմող Մաքսային միության մաքսային օրենսգրքով սահմանված հասկացությունները:

4. Եվրասիական տնտեսական միության ապրանքների փոխադրումը Միության մաքսային տարածքից Միության մաքսային տարածք օտարերկրյա պետությունների տարածքով իրականացվում է Մաքսային միության մաքսային օրենսգրքին, մաքսային իրավահարաբերություններ կարգավորող Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերին և ակտերին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Արձանագրությամբ սահմանված առանձնահատկությունները:

5. Եվրասիական տնտեսական միության ապրանքների՝ օտարերկրյա պետությունների տարածքով փոխադրումը Միության մաքսային տարածքից Միության մաքսային տարածք մաքսային տարանցման մաքսային ընթացակարգին համապատասխան պահպանում են Եվրասիական տնտեսական միության ապրանքների կարգավիճակը:

6. Եվրասիական տնտեսական միության մաքսային մարմնի կողմից, որի գործունեության տարածաշրջանում է գտնվում Եվրասիական տնտեսական միության՝ Միության մաքսային տարածքից ապրանքների բացթողման մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վայրը (այսուհետ՝ բացթողման վայր), ուր ժամանել են այդ ավտոմեքենաները, օտար պետությունների տարածքով Միության մաքսային

տարածքից Միության մաքսային տարածք փոխադրվելու համար Միության մաքսային տարածքից դուրս եկող Եվրասիական տնտեսական միության ապրանքների փոխադրման համար նախատեսված տրանսպորտային միջոցի, կոնտեյների կամ այլ տարայի վրա է դրվում նույնականացման միջոցը: Նույնականացման միջոցների նշանակման կարգը որոշվում է Եվրասիական տնտեսական միության անդամ-պետության կողմից (այսուհետ՝ անդամ-պետություն), որտեղ գտնվում է բացթողման վայրը:

Նույնականացման միջոցների օրինակների փոխանակումն իրականացվում է անդամ-պետությունների կողմից Եվրասիական տնտեսական միության մասին Պայմանագրին Հայաստանի Հանրապետության միանալու մասին Պայմանագրի ուժի մեջ մտնելուց 1 ամսվա ընթացքում:

7. Մաքսային միության մաքսային օրենսգրքին, մաքսային իրավահարաբերություններ կարգավորող Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերին և ակտերին համապատասխան Եվրասիական տնտեսական միության ապրանքների նկատմամբ մաքսային տարանցման մաքսային ընթացակարգի ավարտից հետո նշանակման մաքսային մարմնի կողմից չեն իրականացվում այդպիսի ապրանքները ժամանակավոր պահպանման տակ դնելու կամ մաքսային ընթացակարգին համապատասխան դրանց մաքսային հայտարարագրման հետ կապված մաքսային գործառնություններ:

8. Օտար պետությունների տարածքով Միության մաքսային տարածքից Միության մաքսային տարածք ապրանքներից փոխադրման հսկողությունն իրականացվում է անդամ-պետությունների տեղեկատվական փոխգործակցության տեխնոլոգիայի կիրառմամբ: